Շրջակա միջավայրի նախարար

պարոն Հակոբ Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1.Գործուղվող անձի անունը, ազգանունը**

Արամ Մեյմարյան

**2.Զբաղեցրած պաշտոնը**

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

**3.Գործուղման վայրը և ժամկետը**

Բելգիայի Թագավորություն, Բրյուսել

2023 թվականի հունիսի 25-ից 30-ը

**4. Հրավիրող կողմը**

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն

World Resources Institute ամերիկյան կազմակերպության, ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի հովանու ներքո:

**5. Գործուղման նպատակը**

Մասնակցություն Բրյուսելում կայացած ԳԷՀ «Կովկասի տարածաշրջանում անտառի գլոբալ մոնիթորինգի արդիականացում» տարածաշրջանային ծրագրի ղեկավար կոմիտեի հանդիպմանը

**6. Քննարկված թեմաները (հարցերը)**

Տեղի են ունեցել մի շարք պանելային հանդիպումներ, որոնց մասնակցել են ավելի քան 650 մասնակից ավելի քան 60 երկրներից:

Հանդիպման ժամանակ քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են.

- Հողային տնտեսություն,
- Առանց փոխակերպման մատակարարման շղթաներ,
- Քաղաքներ և քաղաքաշինություն,
- Տվյալների և տեխնոլոգիաների վերաբերյալ համընդհանուր նիստեր,
- Անտառահատում և հանցագործություն բնության դեմ,
- Համաշխարհային թիրախներ,
- Քաղաքային աճի ուղղորդում՝ ռիսկերը կառավարելու և ճկունությունը բարձրացնելու համար,
- Լանդշաֆտի վերականգնում,
- Քաղաքականություն և ֆինանսներ՝ բնության վրա հիմնված լուծումների համար,
- Կայուն սննդի ապագա

Բարձրաստիճան պանելի ժամանակ մասնակիցները հայտնել են տարբեր տեսակետեր ածխածնի շուկաների և բնության ֆինանսավորման այլ պոտենցիալ աղբյուրների գործում աշխարհատարածական մոնիտորինգի դերի վերաբերյալ: Փորձագետները գնահատել են ներկայիս սահմանափակումներն ու ապագա ներուժը, որի

նպատակն է բարելավել ածխածնի պաշարների և հոսքերի չափման ճշգրտությունը, աջակցելու անտառների պահպանությունից և վերականգնումից բխող կենսաֆիզիկական ազդեցությունների և կենսաբազմազանության գնահատմանը և օգուտների արդար բաշխմանը:

## 7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված և քննարկված հարցերը

Հանդես եմ եկել բացման խոսքով: Շնորհակալություն եմ հայտնել կազմակերպիչներին նման կարևոր հարթակ ստեղծելու համար և խոսել կլիմայի փոփոխության, անտառների ու կենսաբազմազանության պահպանման և ճշգրիտ քարտեզագրման վերաբերյալ՝ նշելով Կովկասի ՏԲԿ և նախարարության համատեղ ծրագրի իրականացման կարևորությունը ՀՀ ստանձնած պարտավորությունների շրջանակներում անտառապատում իրականացման առումով:

ԿՏԲԿ տարածաշրջանային ղեկավար տկն. Նունե Հարությունյանը ներկայացրել է Տեխնիկական աշխատանքային խմբի հաջողությունները և աշխատանքները, ներառյալ Ատլասի բազմաշերտ կառուցվածքը, որի հիմնական նպատակներից է դեգրադացված անտառների և հողերի քարտեզագրական շերտերի, կլիմայական գոտիների, կենսաբազմազանության, հատուկ պահպանվող տարածքների, գետայի էկոհամակարգերի թվային քարտեզները: Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն ունի նաև իր անտառների շնորհիվ նվազեցնել նման աղետների ռիսկերը և այդ իսկ պատճառով անտառների ու հողերի դեգրադացիայի կանխարգելմանն ուղղված ջանքերը, մոնիթորինգի և GIS քարտեզագրման տվյալների առկայությունը՝ անտառտնտեսության և հողերի դեգրադացիայի ոլորտում նպատակահարմար գործողություններ իրականացնելու համար մեզ համար չափազանց կարևոր է:

**8.Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Հանդիպման ընթացքում քննարկվել են ծրագրի տարածաշրջանային և ազգային բաղադրիչները, ներկայացվել են Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության և Կովկասի ՏԲԿ-ի համագործակցության արդյունքները և ներկայացվել են ծրագրի հիմնական արդյունքները, ներառյալ Հայաստանի անտառների և հողերի ինտերակտիվ ատլասը:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Շահագրգիռ կողմերը պատրաստակամություն են հայտնել կիսել իրենց գիտելիքները, ուժը, փորձը և ռեսուրսները բարդ մարտահրավերներին դիմակայելու և այս Համաժողովում ստանձնած պարտավորությունները կյանքի կոչելու համար:

Քննարկվել են ծրագրի շարունակականության հնարավորությունները:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ՝

Արամ Մեյմարյան